



**ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը «Հանրակրթության մասին» օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԿԳՄՄՆ) կողմից մշակվել և հանրային քննարկման է դրվել «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որով, ի թիվս այլ փոփոխությունների, ներդրվում է կամավոր ատեստավորման ինստիտուտը: Նախագծի հիմնավորման համաձայն՝ կամավոր ատեստավորումը և կամավոր ատեստավորման արդյունքում հավելավճար ստացող ուսուցիչների դրույքաչափի փոփոխությունը սահմանվել է ուսուցչի մասնագիտական զարգացման և մասնագիտական զարգացման գործընթացը խթանելու համար:

Նախագծի 14-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

**Հոդված 26. Ուսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի
շնորհումը**

4. Յուրաքանչյուր ուսուցիչ կարող է դիմել և մասնակցել կամավոր ատեստավորման:

5. Կամավոր ատեստավորման գործընթացում ուսուցչի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է ուսուցչի դրույքաչափի փոփոխության և 5 տարի ժամկետով հավելավճարի սահմանման համար:

6. Հերթական և կամավոր ատեստավորման հանձնաժողովների՝ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:

1. Բոլոր աշակերտներին որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչների համար, իսկ նման գործընթացի հաջող իրականացման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչները ներգրավված լինեն մասնագիտական զարգացման գործընթացում և կիրառեն դասավանդման արդյունավետ մոտեցումներ. **առանց յուրահատուկ մոտեցումների ու դասավանդման բազմազան մեթոդների իմացության ուսուցիչները չեն կարող կյանքի կոչել որակյալ կրթությունը բազմազան կրթական կարիքներ ունեցող աշակերտների հետ:** Նշվածը, սակայն, ամեննին էլ չի նշանակում, որ որակյալ կրթության



ապահովման և կրթության իրավունքի արդյունավետ իրացման ամբողջ բեռն ընկած է միայն ուսուցիչների վրա՝ **պետության ինքնուրույն և պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է կրթության իրավունքի երաշխավորումը**, որն իր մեջ ներառում է պետության պոզիտիվ գործողությունների իրականացում ոչ միայն քաղաքացուն կյանքի բոլոր փուլերում իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն տրամադրելու հարցում, այլ նաև գործընթացն անմիջականորեն իրականացնող **ուսուցիչների՝ որպես բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովման բնագավառում**: Որակյալ կրթության իրավունքի իրացման տեսակյունից պետության պարտականությունն է ոչ միայն սովորողների, կրթական ծրագրերի և կրթական միջավայրի որակի, այլ նաև ուսուցման գործընթացի (ուսուցիչներ և տեխնոլոգիաներ) որակի ապահովումը: Մարդու իրավունքների զարգացման և պաշտպանության տեսանկյունից որակյալ կրթության տրամադրումը և զարգացումը մարդու իրավունքների անքակտելի բաղադրիչ է. **կրթությունն իբրև մարդու իրավունք ենթադրում է մասնակցություն որակյալ կրթության մեջ, մարդու իրավունքների մասին պրակտիկ գիտելիքներ, կրթությունը որպես իրավունք խթանում է մարդու այլ իրավունքների իրացմանը**:

2015 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» բանաձևը, որով հաստատվեցին կայուն զարգացման նպատակները: Կայուն զարգացման բոլոր նպատակադրումներում կարևորվում է կրթության դերը: Միաժամանակ կրթության բնագավառում սահմանված է առանձին նպատակ. **«Ապահովել ներառական ու հավասարապես որակյալ կրթություն և խթանել կրթության հնարավորություններ բոլորի համար ողջ կյանքի ընթացքում»**: Այնուհետև՝ կրթության համաշխարհային ֆորումը ընդունեց «Կրթության 2030. Դեպի ներառական և հավասարապես որակյալ կրթություն և կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Բնչհռնի հռչակագիրը: Այն, կարևորելով կրթության դերը, սահմանում է կրթության գլոբալ զարգացման գերակայությունները. մատչելիություն, համընդհանուր ներառում և միջոցների արդարացի բաշխում, որակ, կանանց և տղամարդկանց հավասարություն, կրթության հնարավորություններ ողջ կյանքի ընթացքում: Միջազգայնորեն սահմանված ներկայիս օրակարգով՝ կրթության զարգացման գլխավոր նպատակն է կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացու կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալ իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն,



բավարարում է տնտեսության ու հասարակության պահանջները, լիարժեք ծառայում է ազգային շահերին:

Հայաստանի Հանրապետությունը կրթության իրավունքի երաշխավորման հարցում միջազգային փաստաթղթերով ստանձնել է բավականին ընդգրկուն պարտավորություններ¹: Նշված փաստաթղթերը պետությանը պարտավորեցնում են ոչ միայն իրականացնել կրթության իրավունքին առնչվող իրավական պարտականություններ, այլ նաև ապահովել բարձր որակավորում ունեցող դասավանդող անձնակազմի առկայություն: «Կրթության բնագավառում խտրականության դեմ» Փարիզի կոնվենցիայի² 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները, բացի այդ, պարտավորվում են մշակել, զարգացնել և կիրառել այնպիսի պետական քաղաքականություն, որն ազգային պայմաններին ու սովորույթներին համապատասխանող մեթոդներով միտված լինի նպաստելու կրթության բնագավառում հավասար հնարավորություն և վերաբերմունք ապահովելուն, մասնավորապես ուսուցչի մասնագիտության համար ապահովել վերապատրաստում՝ առանց խտրականության, իսկ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին (1966) միջազգային դաշնագրի³ 13-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պետք է շարունակաբար կատարելագործի ուսուցչական կազմի նյութական պայմանները:

Որակյալ կրթության մատուցման սկզբունքներից և երաշխիքներից մեկը համապատասխան հմտություններով և գիտելիքներով զինված մասնագիտական և մանկավարժական անձնակազմի առկայությունն է, ինչը ենթադրում է պարբերաբար վերապատրաստումներ⁴ նշված գործընթացի հիմնական դերակատար հանդիսացող ուսուցիչների համար ոչ միայն առարկայական, այլ նաև մեթոդական վերապատրաստման, կարիքների գնահատման, մարդու իրավունքների և բարեվարքության վերաբերյալ կրթության ապահովման, ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կրթության իրավունքի բնագավառին առնչվող վճիռների բովանդակության վերաբերյալ շարունակական ուսուցման վերաբերյալ. նման պնդման հիմքում ընկած է այն սկզբունքը, որ երաշխավորել կրթության իրավունքը՝ նշանակում է ապահովել որակյալ կրթություն և բարեվարք կրթական համակարգ: Նախորդ տարի իրականացված կամավոր

¹ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի 1-ին մաս, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թ. դեկտեմբերի 16-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 2-րդ մաս, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1989 թ. նոյեմբերի 20-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ին մաս:

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75858>

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18501>

⁴ https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf



ատեստավորման փորձական ծրագիրը ցույց տվեց, որ կամավոր ատեստավորումն իրականացվում է միայն առարկայական գիտելիքների մասով, իսկ կամավոր ատեստավորմանը մասնակցելու համար ուսուցիչը որևէ վերապատրաստում չի անցնում, ինչպես օրինակ հերթական ատեստավորման դեպքում. թե գործող օրենքով, թե նախագծով սահմանվում է, որ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը ուսումնական հաստատության միջոցների հաշվին նախապես պարտադիր անցնում է վերապատրաստում: Նշվածը հատկապես խնդրահարույց է այն իրողությունը հաշվի առնելով, որ նախագծով չի սահմանվում, թե կամավոր ատեստավորումը ի՞նչ չափորոշիչների և ի՞նչ ցուցիչների հիման վրա է իրականացվելու: Այս մասին են վկայում նաև ՀՀ ԿԳՄՍ նախարար Վ. Դումանյանի հրամանով հաստատված «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների կամավոր ատեստավորման փորձական ծրագրի աշխատակարգ»-ի հաստատումից հետո ուսուցիչների շրջանում ի հայտ եկած մտահոգությունները⁵, որոնց պատճառով վերջիններս չեն դիմել կամավոր ատեստավորմանը մասնակցելու համար՝ պատճառաբանելով, որ գործընթացն անորոշ է և հայտնի չէ, թե ի՞նչ բովանդակություն է պարունակում գիտելիքների ստուգման առարկայական թեստը: Այլ կերպ, կամավոր ատեստավորման դիմած ուսուցիչը չունի անհրաժեշտ տեղեկություն գիտելիքների ստուգման առարկայական թեստի բովանդակության վերաբերյալ, հետևաբար՝ գործընթացը չունի որոշակիություն տվյալ իրավահարաբերության մասնակցի՝ ուսուցչի համար, ինչն էլ հանգեցրել է նրան, որ բավական ցածր է կամավոր ատեստավորման դիմած և մասնակցած ուսուցիչների թիվը: Մասնավորապես, 2021 թ. հոկտեմբերի 14-ի [տվյալներով](#) ուսուցչի կամավոր ատեստավորմանը մասնակցելու հայտ ներկայացրած 1372 ուսուցիչներից առարկայական գիտելիքի ստուգմանը մասնակցել են 996 ուսուցիչներ, որը կազմում է դիմած ուսուցիչների 72,6 տոկոսը, իսկ ըստ գիտելիքիների ստուգման արդյունքում ստացած միավորների՝ 30-50 տոկոս հավելավճար կստանա կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների 47,2 տոկոսը: Նման արդյունքները հանգեցրել են նրան, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. հոկտեմբերի 8-ի հրամանով փոփոխություն է կատարվել⁶ կամավոր ատեստավորման կարգում և **իջեցվել է** կամավոր ատեստավորման համար սահմանված միավորների շեմը:

Հիմք ընդունելով վերը նշվածը, առաջարկում ենք Նախագծից հանել հերթական և կամավոր ատեստավորման վերաբերյալ դրույթները. ուսուցչի մասնագիտության համար պետության միջոցների հաշվին ապահովել վերապատրաստում, որն իր մեջ կներառի ոչ

⁵ <https://www.youtube.com/watch?v=p1v3nQ4imUQ>

⁶ <https://escs.am/am/news/10174>



միայն առարկայական, այլ նաև մեթոդական, մարդու իրավունքների և բարեվարքության վերաբերյալ վերապատրաստումները:

2. Օրենքի 26-րդ հոդվածի նոր խմբագրությունը ուսուցչի դրույքաչափի փոփոխությունը և հավելավճարը դիտարկում է որպես ուսուցչի վարձատրության բաղկացուցիչ մաս, իսկ նման վարձատրությունը տրամադրվում է միայն այն ուսուցիչներին, ովքեր դիմում և մասնակցում են կամավոր ատեստավորման և ցուցաբերում են համապատասխան արդյունք: Ստացվում է, որ ըստ Օրենքի՝ ուսուցչի համար որպես հավելավճար ստանալու անհրաժեշտ պայման սահմանված է կամավոր ատեստավորում անցնելու հանգամանքը:

Հայաստանի Հանրապետությունն աշխատանքային իրավունքների պաշտպանության շրջանակներում վավերացրել է մի շարք միջազգային պայմանագրեր, որոնց հիման վրա ստանձնել է պոզիտիվ պարտականություններ՝ ձեռնարկելու անհրաժեշտ և բավարար միջոցներ աշխատանքային իրավունքների արդյունավետ իրացումն ու պաշտպանությունն ապահովելու համար:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կոդմերը պարտավորվում են պաշտպանել արդյունավետ կերպով իր ապրուստը վաստակելու աշխատողի իրավունքը նրա կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից Խարտիայի դրույթներին տրված մեկնաբանության համաձայն⁷ Խարտիայի 1-ին հոդվածի 2-րդ մասն, ի թիվս այլ հիմնական բաղադրիչների, ներառում է նաև աշխատանքային հարաբերություններում խտրականության բոլոր ձևերի արգելքը: Ընդ որում, խտրականությունն արգելվում է ոչ միայն աշխատանքի ընդունման և ազատման կամ այլ բացասական հետևանքների դեպքում, այլ նաև առհասարակ աշխատանքային պայմանների հետ կապված հարաբերություններում՝ վարձատրության, վերապատրաստման, առաջխաղացման և աշխատանքային պայմաններին առնչվող այլ դեպքերում:

Խնդիրն այն է, որ Օրենքով սահմանվող «կամավոր ատեստավորման գործընթացում ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է ուսուցչի դրույքաչափի փոփոխության և 5 տարի ժամկետով հավելավճարի սահմանման համար» կարգավորումը տարբեր

⁷ <https://rm.coe.int/digest-2018-parts-i-ii-iii-iv-en/1680939f80>



իրավական հնարավորություններ է սահմանում միևնույն կարգավիճակում գտնվող ուսուցիչների համար: Մասնավորապես, կամավոր ատեստավորման չմասնակցող ուսուցիչները զրկված են լինելու սոցիալական երաշխիք հանդիսացող և վարձատրության բաղկացուցիչ մաս կազմող հավելավճար ստանալու իրավունքից միայն այն պատճառով, որ ցանկություն չեն հայտնել կամավոր ատեստավորման մասնակցելու: Նշված կարգավորումը խտրական է, չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, չի հետապնդում իրավաչափ նպատակ, քանի որ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում և երբեմն էլ ոչ ամբողջական դրույքաչափով աշխատելու կամ նվազագույն ամսական աշխատավարձից պակաս վարձատրություն ստացող ուսուցչի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում:

Հիմք ընդունելով վերը նշվածը, առաջարկում ենք ուսուցչին տրվող հավելավճարի պարտադիր պայման չսահմանել որևէ ատեստավորում անցնելու հանգամանքը:

3. Օրենքի 26-րդ հոդվածի նոր խմբագրության 5-րդ մասով առաջարկվում է նաև ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար հիմք սահմանել կամավոր ատեստավորման հանձնաժողովների՝ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը:

Եվրոպական սոցիալական խարտիայի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքից ազատվելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են ճանաչել՝ աշխատանքից միայն այնպիսի հիմնավոր պատճառներով ազատվելու աշխատողի իրավունքը, որոնք կապված են նրա ընդունակությունների կամ վարքի հետ կամ հիմնված են ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում:



Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ աշխատողի մասնագիտական ունակությունների տեսանկյունից զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն աշխատանքային պայմանագրով, հետևաբար, գործատուն աշխատողի նշված որակների գնահատման հարցում անսահմանափակ և հայեցողությամբ գործելու լիազորությամբ օժտված չէ, այլ սահմանափակված է աշխատանքային պայմանագրով աշխատողի որակավորմանը, աշխատանքի պայմանների նկարագրմանը ներկայացվող պահանջներով, ինչպես նաև վերջինիս իրավունքներով: Նշվածը վերաբերում է նաև պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում գործատուի և աշխատողի (ուսուցչի) միջև առաջացող աշխատանքային հարաբերություններին⁸:

Ուսուցչի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին կամավորատեստավորման հանձնաժողովների որոշման հիման վրա ուսուցչի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք սահմանելն առավել խոցելի է դարձնում ուսուցչին և ընդհանրապես չի հետապնդում իրավաչափ նպատակ: Նախ, պետք է փաստել, որ **կամավորատեստավորման ինստիտուտի ներդրման հիմնական նպատակը ուսուցչի մասնագիտական զարգացման գործընթացը խթանելն** է, ինչպես սահմանված է նախագծի հիմնավորումներով: Սակայն, մյուս կողմից, **դրական արդյունք չապահովելու դեպքում կամավորատեստավորման մասնակցած ուսուցիչը կարող է կորցնել աշխատանքը**: Ակնհայտ է, որ նման իրավակարգավորումը հակասում է կամավորատեստավորման ինստիտուտի ներդրման նպատակներին, այդ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված չէ հետապնդվող իրավաչափ որևէ նպատակով, իսկ այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ և անհրաժեշտ չեն: Նշվածն առավել հիմնավոր է դառնում այն դեպքում, երբ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ ՀՀ ԿԳՄՆ-ն, պարբերաբար հայտարարում է, որ ՀՀ հանրակրթական հաստատություններում կան ուսուցիչների թափուր հաստիքներ, որը հանգեցնում է նրան, որ այդ պատճառով առարկաներ չեն դասավանդվում⁹: Նման իրավակարգավորումն ընդունելու դեպքում ուսուցիչներին ավելի շատ մտահոգելու է կորցնելու, քան ինչ-որ բան ձեռք բերելու փաստը. մասնակցելով այս առեստավորմանը և ապահովելով դրական արդյունք, ուսուցիչը կարող է շուրջ 30-50 հազար դրամով ավելացնել իր աշխատավարձը (եթե դասավանդում է լրիվ դրույքով), բայց ոչ դրական արդյունք ապահովելու դեպքում ուսուցիչը կարող է ազատվել աշխատանքից, իսկ նման իրավիճակում հայտնվելը, հետևաբար՝ նաև կամավորատեստավորման համար դիմելն իրենից արդեն իսկ բավական

⁸ Թիվ ԱՎԴ1/0367/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

⁹ <https://escs.am/am/news/7766>



մեծ ռիսկ է ներկայացնում: Եվ նման փաստերը հաշվի առնելով՝ ուսուցիչների զգալի մասը չի ցանկանա մասնակցել այս ատեստավորմանը, ինչպես արդեն ցույց է տվել նախորդ տարի իրականացված կամավոր ատեստավորման փորձնական ծրագրին դիմած և մասնակցած ուսուցիչների բավական ցածր թիվը¹⁰:

Հիմք ընդունելով վերը նշվածը, առաջարկում ենք ատեստավորում անցնելուց հետո դրական արդյունք չապահովելու հիմքով ուսուցչի հետ կնքված աշխատաքային պայմանագիրը լուծելու դրույթը հանել Նախագծից:

¹⁰ https://armtimes.com/hy/article/218647?fb_comment_id=4141868612514830_4144846685550356